

պատահական է մասնակցութիւնը ունենալը, այսպէս որ
ուս. խորհուրդը յուսահատուած այսպիսի ազգա-
պետական կարգաւորումով և այսպիսի վարժարան-
ներով բարեկարգութիւն գործադրելէ, հրաժարական
տուած և մի կողմ քաջութեամբ: Ուս. խորհուրդը
նախ ուղեց Վանի բոլոր վարժարանները միօրի-
նակ ուղղութեան վերածել: Նախապէս, մի կողմ
թաղական յայտարար (պրօպագանդա) պատրաստեց որ-
ով զորք մնացած էին մինչև այժմ Վանի բոլոր
վարժարանները: Յետոյ ֆարաքական ժողովին
խորհրդակցութեամբ և համահամաձայնութեամբ, բազմ-
թիւք Վանի և Ալեքսանդրի բոլոր վարժարաններուն
այցելու տեսուչ որոշեց պ. Մ. Փորթուղականին
որ ամեն շաբաթ պիտի այցելէր բոլոր այդ վար-
ժարաններուն և պիտի հսկէր ուս. խորհրդի յայ-
տարարին և հրահանգներուն ճշգրտութեամբ գործա-
դրուելուն: Բայց ուս. խորհուրդը Նորաշէն թաղի
վարժարանին իւր առաջին այցելութիւնն առած
ժամանակ, նոյն թաղին քահանայ և վարժարանին
ուսուցիչ և տեսուչ տ. Կոմիտաս Կիւնէկեան, ա-
շակերտներին առջև անպատուական աղբ, ուս. խոր-
հրդին, յայտարարելով թէ ինքը ոչ ուս. խորհրդի
որոշումները կը ճշգրտէր, ոչ ալ նրա իրաւասու-
թիւն կը ճանչէ: Փորթուղական առաքելութիւններ
եղան խորհրդին և ուսուցիչ քահանային մէջ և երբ
քահանան սկսաւ աշակերտներին առջև անաւո-
թաբար կոչել և զայնապէս սարքել, ուս. խորհուր-
դը խանութիւն համարեց անմիջապէս մեկնել
վարժարանէն և ս. Հայրիկին տեղեկագրել այս
բաշխուղի քահանայ ուսուցչի արարքը: Հայրի-
կը Ազգ. ժողովներին հետ խորհրդակցելով, որո-
շեց այդ քահանայի դադրեցումը ուսուցչական
պաշտօնէն և այդ խնամքով հրամանագրի պրից
քահանային. բայց քահանայն իւր պաշտօնական
քաջակրօնով որք ու. Հայրիկին տապալելով, նո-
րա տեղ Սրտանձնեանց Գարեգին վարժապետին
առաջնորդ դնել աշխատողներն են, զիմաղթեց
Հայրիկի հրամանին և կը շարունակէ իւր պաշտօնը:
Այս բանի մէջ յատուկ դիտում կար. Գարեգի-
նեանները կուզէին որ Հայրիկ խիստ միջոցների
դիմէր այս ապստամբ քահանային պատժելու հա-
մար և իրենք ալ առիթէին օգուտ քաղելով, այդ
կեղծեցող ժողովրդեան տղէտ և պարզամիտ մա-
սը զգուշէին ի պաշտպանութիւն իրենց քահանա-
յին ընդդէմ Հայրիկի և Վանի ժողովուրդը դար-
ձաւ նկրդին կուռնեցող զաւթեցնելին: Այս միջո-
ցին մի քանի տրիպայու վարժապետներ, որոնք 20
տարիէ չափ կայ որ ուսուցչութիւն կանէին Վա-
նի մէջ առանց արդիւնք ցոյց տալու և քանի
տեղեր ալ յանդիման են հրապարակաւ խօսել թէ
մեք յիմար ենք միթէ որ ուսեալ աշակերտներ
հանգուցնեն, որք կարենան վարժապետ լինել և
մեր հայ մեր ձեռքէ խլել, այս վարժապետներ
սրտազոյր ըստուած որ ուս. խորհուրդը և իւր
կարգած այցելու տեսուչ պիտի հսկին այսուհե-
տ և իրենց գործունէութեան վրայ, մի քանի վար-
ժարաններու կարգապահները և տեսուները ի-
րենց հետ միացունելով, մի գրութիւն կը տան ս.
Հայրիկին թէ Փորթուղականին տեսչութիւնը չեն
ընդունիր, որովհետեւ նա անկրօն է եղեր, պաշքը
կուտէ եղեր, և այլն: Ս. Հայրիկ կարեւորութիւն
չը տուաւ բնաւ այսպիսի դրապարտիչ և սղակա-
կան գրութեան. բայց ուս. խորհուրդը տեսնելով
որ ս. Կոմիտաս քահանայն, ս. Հայրիկի հրամա-
նին հակառակ, անպատիժ կը մնայ կուսակցու-
թեանց չնորհի, թաղական վարժարաններու բարե-
կարգութեան յուսահատ, հրաժարական տուած,
թէ և ազգ. վարչութիւնը չէ ընդունած դեռ իւր
հրաժար, խոտանալով որ պատժէ տ. Կոմիտաս
քահանային: Փորթուղական ալ հրաժարական
տուաւ իւր այցելու տեսչութեան պաշտօնէն և
այժմ իւր կենսագրական վարժարանով միայն կը
գրաւէ: Այս Կոմիտաս քահանայն Գրան պաշտօ-
նեցաւ և անօթի մնաց, քահանայ դարձաւ, խոտ-
անալով Հայրիկին որ այսուհետեւ խղճի մտքը
և առանց կուսակցական ոգու աշխատի ազդին
համար: Բայց այժմ որ քահանայ եղած պրծած է,
մտքեր է իւր այդ խոտում: Մինչև երբ մեր
խեղճ ազգ այսպիսի փորձանքներ պիտի կրէ տ.
Կրթականների ձեռքէն: Երբեք մի Տ. Մեկ-
թիւնը քահանայ ազգը կը խառնակէ և կը մատ-
նէ, Վանի մէջ ալ տ. Կրթական քահանայն կաշ-
խատի ներքին կուռնեցող և անկարգութեանց
մասնակց ժողովուրդը իւր ամբարտաւանութեամբ:
Մուշկի ս. Կարապետ վանքի միաբանութիւնը
վանահայր ընտրած է խորթնան Հայրիկին և գա-
ւառին ազգային ժողովն ալ առաջնորդընտրած է
Նորին Սրբազանութեան: Մի քանի շաբաթէն յի-

տու Հայրիկ կերթայ Մուշ. այս բանի համար
Պատրիարքարանի անկէք կարգադրութեանը կը
ստատէ:
Մի քանի շաբաթ յառաջ մի սոսկալի սրբա-
պղծութիւն կատարուած է Կարճկան գաւառին
մէջ որ Վանի ծովի արեւմտեան հարաւակողմն է:
Կարճկանի գաւառապետը (կայմապաշ) Զիւս Բէկ-
անուն որ Մոկսի մէջ գործած քառամեկի բարբա-
րութեանց համար ժողովրդեան սատակ ըլլա-
րանայ համեմատ և անդիմադրելի նախկին գեր-հիւ-
պատու պ. Կլէյտօնի միջնորդութեամբ պաշտօ-
նանի եղած, բայց վերջերս դարձեալ յաջողած է
գալմապաշ լինել Կարճկանի, սոյն գաւառի հայոց
և կեղև ցւոյն մէջ 15 տարեկան մի հայ պա-
տանուց հետ անկալել ընթացք ունեցած է:
Պատանին եկաւ Վան բողոքել գալմապաշին. խոր-
ման Հայրիկ փութաց այս սոսկալի սրբապղծու-
թիւն հաղորդել Ներսէս սրբազան պատրիարքին
որ հեռագրով խնդրեց մանրամաս տեղեկութիւն-
ներ տալ իրեն այս նկատմամբ: Այսպիսի սոսկա-
լի ոճի մը համար տեսնելը թէ ինչ պիտի անէ
սարգապաշ Սլէյք փաշան որ Ներսէս պատրիար-
քի վերահաստատութեան առթիւ հաստատ յոյսեր
տուած էր Հայաստանի մէջ բարենորոգումներ մտց-
նելու համար... Իսկ մեր նահանգապետ փաշան բո-
լորովին անտարբեր և անհոգ է յանցաւորները պատ-
ժելու. նա ամեն կերպով կաշխատի հայ ժողո-
ւորը ճնշել այստեղ: Անցած օր նահանգապետ
փաշային յայտարարութիւն յղած էին մի անգամ
տեղէ, Վանի ապստամբական գործադիր ժողով
ստորագրութեամբ, որ եթէ հայոց դէմ բռնած
թշնամական և բռնաւարակներ ընթացքը չը փոխէ,
իւր կենսքը փախցնէ մէջ է: Փաշան այնպէս ցոյց
տուած է թէ կարեւորութիւն չէ տուած այդ նա-
մակին, բայց իրօք շատ վախեցել է:
Փետրվար 4-ին, Կամարական բէկի Շուշանիկ
աղջկան ծննդեան տարեդարձը լինելով, ուսա-
կան դեր-հիւպատոսարանի մէջ մանկական հան-
դէս կատարուեցաւ: 150-ի չափ տղայներ հաւա-
քուած էին միամտալ Շուշանիկի առաջին տարե-
դարձը հիւրանալու. մանկական ուրախ երգեր
կերպելով և խաղալով կը գոհարձանային: Տեսնելու
արժանի բան էր երեխաների ուրախութիւնը այն
մեծ սենեակի մէջ ուր երկու մեծ ծառեր գրուած
էին որոց տերեւախիտ կանաչ ճիւղերը զարդարուած
էին մանկական գեղեցիկ խաղալիքներով: Ա-
նեակին պատահանները բոլորովին ծածկուած
էին, այնպէս որ ցերեկ ժամանակ դէշեր կաղ-
մուած էր և սենեակին մէջ գոյնզգոյն բազմաթիւ
ճրագներով լուսավառութիւն եղած էր: Հանդէսը
վերջանալէն յետոյ, խաղալիքները բաժնուցան
ներկայ եղող բոլոր երեխաներին, որոց մէջ մի
քանի բարձրաստիճան թիւրքերի զաւակներ ալ
կային: Կամարական բէկ երեխային մի փառաւոր
ճաշ տուեց: Անոնին մասնակցեց էր պատուաւոր
անձանց բազմութիւն մը որոց կը նախապահէր
խորթնան հայրիկ: Առանդաղին ծախահարութիւն-
ներով բաժանեց պարպուցան Ալեքսանդր Կալ-
սեր և Վանի մէջ իւր ներկայացուցիչ Կամարա-
կան բէկի և իւր ընտանեաց, ինչպէս նաև թիւր-
քաց սովթանին, Ներսէս պատրիարքին, խորթնան
հայրիկի և այլն կենաց համար:
Այս ուրախութիւնէն յետոյ, կը ցաւում որ մի
տիտուր լուր ալ ունեւ ձեռք հաղորդելու: Փետրվա-
րի 18-ին, Վան նահանգի հարաւակողմն գտնուող
Շատաղ գաւառին մէջ, սոսկալի և նմանը չը
տեսնուած ուսի (ձիւն հիւս) մը գործելով լեռնէն,
ահաղին մեծութեամբ կլիջէ Շատաղու թաղին
վրայ որչա արեւմտեան կողմն եղած 128 գեղեցիկ
պարտէզներ, 10,000-ի մօտ ծառեր արմատէն կը
խլէ կը քանդէ: 19 տուն որոց մէջ 61 ընտանիք
կը բնակէին, մի քանի բուսիկ մէջ հիմնադրուած
լինելով ուսիին տակ կը ծածկուէին, իրենց ամբողջ
բնակիչներով, գոյքերով, անասուններով, 7 աղօ-
րիկներով և 3 խանութներով: 32 տուն, 3 աղօ-
րիկ և 17 խանութ ալ շեղուած են բայց բոլոր-
ովին վրած էին: 159 մարդ (թէ այդ և թէ կին)
թաղուած են ձիւնի տակ. սոցանէ 100 ողջ դուրս
հանուած են փառակներու տակէն, թէ և անոնց
ալ մեծ մասը վիրաւորուած և կամ չհարկել ե-
ղած լինելով, հիւանդ պարկած են այժմ և կը
զարմանալին: Մնացած 57-ի ալ դիակները հնազ-
անի դուրս կը հանուին, գրեթէ 30 կանգունի
մօտ խոր փրատակներու տակէն: Մոկսի բան և
տեսնել այդ ճովուած և ջարդ ու փշուր եղած
գիւններու վիճակը, որոյց մի քանին գիտ 4 օր
յառաջ ամուսնացած հարս ու փեսայներ էին:
Վանի նահանգապետ փաշան հանգանակութիւն
բայցած է կենդանի մնացած շատակներէն շեղ-

ստածներին օգնելու համար: Հաւաքուած գո-
մարը 300 լիւրայի (գրեթէ 2800 լուր) հասածին
պէս, օգնութիւններ պիտի հասցունէ այդ խեղճ
գիւղացիներին որոց մէջ իրենց հայր և մայրը
կորուսած փոքրիկ երեխայներ ալ կան որոնք նոյն
ժամին տունէն դուրս ուրիշ տեղեր գտնուելով
աղաւաղու են: Վնասուողները հայեր են բոլոր:
Թիւրք կառավարութիւնը այս օրեր նորէն ըսկ-
սած է խոտովութիւնները շտապեցնել Երզրումի մէջ:
Գ. զորաբանակին հրամանատար Մուշկի-փաշան,
Բ. Գրանի ստացած հրահանգին համեմատ, հրա-
ման կը հանէ Երզրումի մէջ հայերու քով գտ-
նուած բոլոր հրացանները հաւաքել և միայն
թուշուն որսալու գործածուող հասարակ հրացան-
ները թողուլ: Հրացան խողարկելու պատրուակով
զանազան տուներ և խանութներ մտած են կա-
ռավարական պաշտօնեաները և ծանր անկար-
գութիւններ արած, որով դիմադրութիւններ եղած
են և դարձեալ խռովութիւն և նոր ձերբակալու-
թիւններ պատահած են Երզրումի մէջ: Առ այժմ
մանրամաս տեղեկութիւններ չը կրցանք ստանալ
այս նոր դէպքի մասին: Թերեւ յաջորդ անգամ
գրեմ ձեռք:
Արդէն գրած էի ձեռք որ ազգ. քաղաքական ժո-
ղովին առնալով և ուսումնական խորհրդի ա-
ռնալով պ. Սեդրակ Տէր-Սարգսնայ եռամեկուն
երկուստեքին (հեղինակ «Շահին ի Սիւլի» վի-
պաստութեան, «Վառաքանի կայծեր» բանաս-
տեղծական տետրակին, «Մանուկների արքայու-
թիւն» մանկավարժական տետրին և այլն) Պո-
ղոս եղբայրը կողոպտեցին ոստիկանների քաղաքի
փողոցին մէջ: Շատեր կասկածեցին թէ մի պաշ-
տօնեաների մատը կայ այդ կողոպտուի մէջ, որով
հետեւ մի քանի շաբաթ յառաջ Վալի-փաշան մի
բարձրաստիճան հայի միջոցով լուր յղած էր պ.
Տէր-Սարգսնային որ ազգային գործերէ և հայրե-
նասիրական խօսքերէ հեռու կենայ, եթէ ոչ այն-
պիսի փորձանքներ կը բերեմ իր գլուխ որ վեր-
ջին աստիճան թշուառութեան մէջ կլինայ և ալ
չը կրնար ազգային բաներու վրայ խորհել: Շա-
տաղու կասկածը հաստատուեցաւ այժմ, որովհետեւ
նահանգապետը ոչ միայն չուզեց հրացաններով
ենթադիւն այն ոստիկանների որոց համար գողու-
թեան կասկած յայտնած էր, այլ և երկու օր յա-
ռաջ, կիրակի օր, պ. Տէր-Սարգսնայի միւս եղ-
բայր, ոսկերիչ պ. Աւետիս խանութի պատը ծա-
կելով, մէջ գտուած բոլոր ոսկերէն և արծաթե-
ղէն իրերը կողոպտելէ դատ, բոլոր գործիք-
ներն ալ, մինչև անգամ անարժէք փոքր խաղող-
ներն ալ կողոպտած տարած են, չեղ մ'անգամ
չը թողով: Փաշան դարձեալ անհոգ է. գողերը
գտնեք բերեք որ պատժեմ կը պատասխանէ բողո-
քողներուն: Հայ հասարակութիւնը այս անպա-
հով միժակէն բոլորովին սարսափած, մեծ իրա-
քանցով մէջ է. Վանի մէջ ալ Երզրումին առիւ
ահաղին խռովութիւն մը մօտալուտ կերեքի, ամե-
նուն ալ բերանը սա խօսքեր կը պարտեն թէ լաւ
է մեկնել քան թէ այս աստիճան հարստահա-
րուած վիճակի մէջ ապրել: Ամեն տեղ ալ գողու-
թիւններ կը պատահեն, բայց ոչ մէկ տեղ կա-
ռավարութիւնը այսպէս համարձակ կերպով չը
քաջակրէր գողութիւնը: Վանի պատու կիններն
ալ, կարծես թէ երկուստեք պաշտ, կը պոստեն թէ
երբ պիտի ազաւթեք այս անհաւատ և բարբարոս
թիւրքերու ձեռքէն...
Հրանտ
ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ
—Ապրիլի 20-ին Բօսնի մէջ Ֆրանսիայում Բա-
ղայի մանուկ գործարանի բանուորները զարդա-
րին աշխատանքները: Բօսնի մանուորները նորից
պահանջեցին, որ շաբաթ երկուսները նրանց հան-
դիստ արվի և սկզբի համար շաբաթ երկուսներն
չը դնային աշխատելու: Առում են, որ բանուոր-
ները հասարակական ցույցեր կանեն, բայց հաղի-
թէ այդ լուրը ճիշդ լինի, որովհետեւ առաջ էլ
Բօսնի բանուորները իրանց շատ լաւ են պահել:
—Գերմանական պետական կանցլերը դիմեց
պարլամենտին, թույլտուութիւն խնդրելով հաւանել
պատրաստուող Վոլմարին սօցիալիստներին մասին
օրէնքի հիման վրա: Այդ պատրաստուող կալանա-
ւորվեցան Կլիւս մէջ, երբ նա վերադառնում էր
սօցիալիստների կօպենհագենի կօնգրէսին:

Լային պալատի Նիկոլայեֆսկայա դահլիճի
մէջ Կայսրը և Կայսրուհին բարեհաճեցին
զատկապ շնորհակալութիւն ընդունել Ս.
Պետերբուրգի գործերի բոլոր Ֆերէֆերեն-
րից, վախճաններից և շտաբ-գործիստանե-
րից: Այդ բոլոր գիտություններն թող արվե-
ցաւ համբուրել թագուհու ձեռքը և ա-
մենքն էլ Նրանից ստացան ձեռնապակէ
ձուաններ: Գրանից առաջ Չմերային պալա-
տի հրապարակի վրա կեղեցական զօրա-
նալ ունեցան լէյքալարդայի գրեւորներ-
ների գունդը և հրացանաձիգների առաջին
և երկրորդ բաժանիւնները: Զօրքերը բազ-
դաւորվեցան Բարձրագոյն հաւանութեամբ
և հանդիսաւոր մարշից յետոյ օֆիցերները
հրաւիրեցան Բարձրագոյն նախաձաշիկի:
Երէկ Կայսրուհու ներկայութեամբ Եփառե-
րիսկի ինստիտուտի մէջ օժնովեցաւ կանանց
գիմնադիւանների 25 ամեայ յօբելանսը: Գիմ-
նադիւանների կառավարիչ Օսկարին ծառը
վիպում է գիմնադիւանների աջողութիւնը.
սկզբից 262 աշակերտուհի կային, իսկ
այժմ 4000: Մինչև այժմ ուսումը աւար-
տել են ընդամենը 10,000 աշակերտուհիք:
Նաւաղնացութիւնը սկսվեցաւ: Բացվելու
են երկու ջրանցքներ Սվիլսկի և Սասկի
ջրանցքների կից: Այդ ջրանցքներից կա-
րող են անցնել Մարինսկի ջրերի վրա բողո
բեռնակիր ամեն տեսակ նաւեր: Մինօգի
մէջ հարց է բարձրացրած գիւղական ծխա-
կան ուսումնարանների բարեօրման մասին:
Մուրաշեֆի, որ յայտնի է իր գործունէու-
թեամբ ուսաց առեւտուրը Բոլշարիայի,
Սերբիայի և Բուլղարիայի մէջ մոցնելու հա-
մար, նորերում հասաւ Ս. Պետերբուրգ
Ֆինանսների մինիստրին մի գրութիւն ներ-
կայացնելու համար պալլեան երկիրների
հետ առեւտուր անելու մասին:
Կ. ՊՈԼԻՍ, 20 ապրիլի: Թագադրութեան
ժամանակ սուլթանի ներկայացուցիչ վերջ-
նականապէս նշանակված է Սերվեր-փաշա:
ՓԱՐԻՑ, 20 ապրիլի: Արտաքին գործերի
մինիստր Շարմեյ-Լակուր, պատասխանելով
Բրուիի հարցին, յայտնեց, թէ ոչ ոք չէ մտա-
ծում, որ Խաղալի, Գերմանիայի և Աւստ-
րիայի զաշնակցութիւնը ուղղված լինէր
Ֆրանսիայի դէմ, որ վերջինը չէ աշխա-
տում զաշնակցներ գտնել և ցանկանում է
բարեկամական յարաբերութիւններ ունենալ
ամենքի հետ, պահպանելով իր արժանա-
ւորութիւնը: Ֆրանսիան կը յարգի ուրիշնե-
րի իրաւունքները և մի և նոյն ժամանակ
կը պաշտպանի իր սեփական իրաւունքները:
Բրուի չը բաւականացաւ այդ բացատրու-
թիւններով:
ԱՍՏԱԲԱՆ 20 ապրիլի: Պարսից շահի
եղբայրը ապրիլի 19-ին ուղևորվեցաւ Թա-
գադրութեանը Ապրիլի 25-ին նրան այս-
տեղ ապաստւ են:
ԿԱՅԱ, 20 ապրիլի: Փորձված անտեսնե-
րի կարծիքով Կազանի, Մամարայի և Սիմ-
բիւրսկի նահանգների ձմերկայ ցանքերը վատ
են:
ԳՈՒԲԼԻՆ, 20 ապրիլի: Գիւնեկ և Կաֆ-
րի այսօր խոտովանվեցան, որ մասնակցում
էին Ֆինիկս-Պարկի սպանութեանը, և մա-
հուան զատապարտվեցան: „Boersen Cou-
rier“ լրագիրը հաղորդում է, որ հիմնիկ-
ցաւ գերմանական-միջին-ուսական երկա-
թուղիական խումբ, որի տարիքները մա-
յիսի 1-ից ութ կը ստանան և որի կենսոթ-
նատեղին Անդրեա ուղարկվող ապրանքների
համար Համբուրգը կը լինի: Տարիքը մեծ
մասամբ աւելի պակաս է քան թէ այն, որ
վերջնական է Բալտեան ուսաց նաւահան-
գիւսանքով Գուլից մինչև Մոսկով տեղափո-
խելու համար:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

